* * *

Սիրելիք մեր, որ ի ժնև,
Նիկոլ, Դերենիկ և...
Այսօր ժողովյալ
Ի վերնատուն,
Հիշեմք անցյալ
Մեր խընդություն
Ուրախ հանդես,
զՄեր Բայրոն և զԲրանդես...
որ ար<>... բարձր ափին վճիտ լիմանի,
Ուր շուրջանակի լեռներ գեղանի
Որ ուժ են տալի թույլին ու հեգին,
Վազում են թափով սիրատենչ էգին...
Եվ զերթ արծիվներ թևածալ, քոսոտ,
Ըմբոստացումներեն կըռված հերըսոթ
(հիանալի՛ կոթ)
Ձենք իմանում,
Ինչ են անում,
Ուր են գընում,
Ուր են քընում,
Ինչ են ուտում,
Թե հենց տըրտում,
Տըրտում, տըրտում,
Վիշտը սըրտում,
Միշտ կըտըրտում,
Միշտ պըտըրտում
«Տեսիլը կյանքի?
Ոչ այս աշխարհից...

Գլ. Բ

Օ՜ն և օ՜ն,
Ո՜վ նոր Բայրոն,
Որ ի Շիյոն,
Եվ Բրանդես եգիպտացի,
Որ Վերնատուն տվյալ քացի
Փախար Սուեզ
Գոնե էնտեղ ղայիմ կացի,
Որ չըկորսվես...

III

Իսկ մենք – այն է,
Շեքսպիր, Հայնե,
Նահապետ, Նիցշե,
Էս էլ քիչ չէ....

4

Տվյալ թվին այս փրկչական,
Որ շատ արյուն և շատ կական
Ի վերա մեր հասյալ կան,
Եվ ետևից դեռ պիտի գան,
(Ով թշվառ ազգ մեր հայկական)։
Տվյալ այս թուղթ,
Ձեզ, ով պանդուխտ
Եղբարց մերոց
Կորելոց,
Եվ կարոտելոց,
Բայրոնա երկրորդի
Եվ Բրանդես շանորդի...

Եվ արդ,
Բարդ-բարդ
Ամենքին պարտ,
Սակայն հպարտ
Ու միշտ Գերմարդ,
Մնում ենք ձեզ
Կարոտակեզ
Ես՝
Օհաննես,
Ավօն,
Լևոն։

Ի մայրաքաղաքն հայոց և վրաց,
Որի համար են միշտ կռված։
Ազգք երկուքյան ի սկզբանե,
Ձեր կարոտը մեզ կըսպանե...

Վկա ենք մենք Ջավո, Օլյա...